

§ 16. ԱԹԵՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1

Արքունտ Դրակոնի կազմած օրենքները պաշտպանում էին մասնավոր սեփականությունը: Այսպես, ուրիշի այգուց անգամ մեկ ողկույզ խաղող գողացողին սպառնում էր մահապատիժ: Մահապատիժ էր նախատեսվում նաև մարդասպանության համար: Երբ Դրակոնին հարցրին՝ մի՞թե այդ հանցանքները արժանի են նույն պատժին, նա այսպես պատասխանեց. «Ուրիշի սեփականությունը գողանալը ծանր հանցանք է և արժանի է մահապատժի, դե իսկ մարդասպանության համար ես ավելի դաժան պատիժ չգտա»:

Պատահական չէ, որ աթենացիները ասում էին, որ Դրակոնի օրենքները գրված են ոչ թե թանաքով, այլ արյունով:

2

Իր արքնտության ժամկետի ավարտին, Սոլոնը աթենացիներից երդում վերցրեց, որ նրանք 10 տարի իր սահմանած օրենքները չեն փոխի, և Աթենքից հեռացավ: Նա քաջ գիտակցում էր, որ իր բարեփոխումները շատերին չեն գոհացրել և ասում էր. «Ես արիստոկրատներից իլեցի այնքան իշխանություն, որ նրանք ժողովրդին չհարստահարեն, իսկ դեմոսին տվեցի այնքան, որքան նա կարող է իրականացնել»:

Սոլոնը դեռ հնում համարվել է Հին Հունաստանի 7 իմաստուններից մեկը: Նրա ամենահայտնի ասույթն էր՝ «Չափավորությունը ամենից լավն է»: